

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՅԵՐԱՅՈՒՆԻ
ՅՈՑՆՈՒՄՈՅՑ

ԽԱՅԻՔԱՆ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՒԼԻՍԻ 2-ին. Թիֆլիս. №27


ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ




Կ Ա Ղ Ն Ի Ն Ը Ն Կ Ա Ի...

Я.С.БЫХОВА

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ
Բ Ա Ժ Ա Ե Գ Ի Ե Զ Դ Ե Ը Թ Ի Կ Ե Ը Թ Ի Կ Ե Ը



ՄԱԹԲԱԼԱ



Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և դժբեհիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կորզիչները և խայտառակիչները:

Անհրաժեշտ թերթ բոլոր բնօրհիմքների համար

«ԽԱԹԱԲԱԼԱ» շաբաթընթաց թիմադրեցնում է, շաբաթընթաց էլ ցանցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի: Հասցեն՝ Тифлиς Музейный пер., редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Ժամանակաւոր խմբագիր՝ Ս. Մուրայանյան

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐԶԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 »
Երեք ամիսը	3 » 50 կ.
Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղծ:

Ձրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր:

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑՑԸ

1911 ՅՈՒԼԻՍ 30 օր

2

Суббота **ՀԱԲԱԹ** Ծափատո
Լուսնի 20

3 (Կիր.) Տօն վարժապետաց հայոց նորաւարտից, որք նորածիլ բեխերն սրեալ Բողոքի ֆիքսատուրաւ, աշակերտաց իւրեանց վասն կըրթելոյ, կրտսն և յետ ուսման վերջապետ քթիւք վերադառնան վասն գերեզմանոց մարշրուղն կատարելոյ:

4 (Բ. 2.) Անւանակողութիւն անանուն անձից անպիտանաց, որոց դիմումն ի լօրդոց պալատէն Անգլիայի յարգեալ էր, վասն զվեց կրանտո շինելոյ ի բախին վանաց աւ. եկեղեցոյ զի հազարաւոր ժողովուրդս զովացուցէ զպապական լեզու իւրեանց, բայց, որպէս լսեմք, յարմար կրանտո ոչ կարեն ճարել:

5 (Գ. 2.) Տօն սրբոյն Ստ. Մալխասեանի, որ որոշեալ է ի յիշատակ նորոգ հանգուցեալ Աղայեանի փոխանակ արշիւնանոց վ-ի գործ ածել վերջոկանոց և-նր:

6 (Գ. 2.) Յիշատակ անիրաւ աղաբաշխաց Թիֆլիսում, օրոց վիճակն անկեղծ սրտէ ողբամ, քանզի ի ժամանակի այսպիսի աօթի և շոգի, մարմինս նոցա նեժնի-մարմնի տառապեն 12 դաժան բարցիկները բեռան տակ:

7 (Ե. 2.) Տօն ձրիակեր յաճախողաց յընթերցարանի Բարեգործականի, որք ազգասիրաբար կարգան և հայաբար մոռանան զոնէ մի կողմէ ձգել ի մէջ արկղին ընթերցարանի:

8 (Ուրբ.) Յիշատակ մտնուոց անյիշատակ բելիս ուսողաց ինտելիգենտաց, որք յետ թաղման Լազարոս Աղայեանի ի սէր ազգութեան, զհրուժար արեալ զկարմիր զինին և յիշեալ «Մանիւր մանիւր իմ ճախարակն» հանգուցեալի, զմիմեանց բուրդս գեղեցին վասն մանելոյ ի ճախարակին այդորիկ:

Աստղադէտ—տօմարագէտ և օրացոյցագէտ
Փարեմուզ

ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Նրանք ամենքը, որոնք շոգերից նեղանում են և ամառանոց էլ չեն գընում՝ իրաւունք ունեն՝ Գուռ գետի ջրում լողալ երբ և կամենան. և մերկանալով ցինիկութիւններ անել դէպ անցնող հասարակութիւնը:

(Դրա համար ոչ ոք չի նեղանայ և ոչ արել կըյարուցեն):

II

Պետական Դուռայի անդամ Յով. Սաղաթէլեանի Սօջիվանքում շնորհալի ճառ լսողներին պատելիքում ենք՝ միշտ յիշել այն և յիշելիս չմոռանալ որ հայ ժողովրդից, որտեղից դուրս են եկել մեր մեր հսկայ Անովեաններ, Նազարեաններ, Աղայեաններ դուռ է եկել և զանա՞մ Սաղաթէլեաններ և նրանմաններ:

III

Աղայեանի թաղման օրը էլ յօրատո ճաշարանում արցունքով քեֆ անող հայ ինտելիգենտներից նրանց՝ որոնք «քաջաբար» բռունցքներ բարձրացրին և օրհնանքի տեղ օրթաճալայն հայհոյանք գործածեցին և դրանով ցոյց տւին իրենց կրթութիւնը՝ շնորհիմր՝ մ'ըմպիւթ շնորհակալութիւն:

Հարկնման դէպքերը աւելի քան պերճախօս փաստեր են, ցոյց տալու համար՝ թէ մեր «ճշմարիտ» ինտելիգենտները որչափ յառաջադիմական գաղափարների տէր և պաշտպան են:

ԿԵԹՂԿՈՍՏԱՆԸ ՀԵՐԾԵՐԸ

II

Կաթիլոսական «հարցը» վունցոր ստում էք՝ էս սհաթին լաւ հարց է այ. դուրթ է շատիրը էն ին ստում, թէ կաթիլոսական հարցիրը, կօսէ, միգ համա, կօսէ, մէ գրօշ չաժէ, կօսէ, համա էդ սասճներուն՝ միք աւտայ:

Թէ իմ խաթրը ունիք՝ միք աւտայ: Ինչո՞ւ վուր—ասածը ուրիշ է, արածը ուրիշ:

Մա՞շ: Կաթիլոսութիւնը միգ համա մէ գրօշ չաժէ, կօսէ:


Ու էսէնց էլ է:

Չունքի—

Էպիսկոպոզներու, վարթապիտներու ու մէկէլ սևագլխներու հիգ էլ լաւ ինք եօլա գնում, կօսէ, ումը գուզինք՝ գուրձիր ինք տալի, կօսէ, ումը գուզինք՝ փուղ ինք տալի, կօսէ, ումը գուզինք օխնիլ ինք տալի, կօսէ, ու ումն էլ գուզինք՝ մօխնում ինք, կօսէ—հետախ ինք բանը արբանդայ ա-նում, վուր օխար կաթիլոս չի կանայ խիլթի բերի, կօսէ:

Իս էլ իմ խանդիսխան էդ խասիաթի ժամ ստում:

Թէ վուր գուզիմ մէ քիշ աֆրակ է-րկնամ՝ էդ թաւուր բանիր իմ ստում:



Կաթողիկոսութիւն ինչ կօնինք, ասում իմ: Հուզուողումը կի մէ գլուխ էն իմ աղօթիկ անում:

—Աստուծ, ասում իմ, միք էջմիածնին մէ խիլքը գլխին, ու Աստուծասէր կաթողիկոս տու, ասում իմ, և Քիզ վայելէ փառք ու իշխանութիւն՝ աւէտեանց աւիտենից, ասում իմ:

Կաշառք իմ խոստանում:

Վա՛, թէկի ընդախտուր մարթիքը, նրանք՝ վուր կաթողիկոսական գուրծերում չին խառնուում—կաշառք կու վերցնին—իս կի չիմ կանայ տայ—էնդուր ուփրօ, չունքի ինքս կաթողիկոսանայ՝ վունցոր գիղիք իմ խասիաթը, չիմ ուզում,—չունքի, շէր կնգաս հիզ մէտի իմ ապրում, ու մէկէլ էն վուր, գիթ խօմ չիմ, համ կնիկ ունենամ՝ համ էջմիածին գնամ.—էդ բանն անողները աշխարհական ու կնիկ ունեցող մարթկերանց կաթողիկոս գարցնողները, հալբաթտա դոխտուրներով հաստատ գեղէին, վուր իրենք էլ մարթամէջ չին կանայ նրնգնի ու չունքի չին էլ կարում կնգգերանցմէն բաժնի, ուզում ին գնայ էջմիածին, վուր Տիկին Վեհափառուհիներու հիտ կաւալէր-վարթապիտաները սիլի-բիլի անին ու սիվ էրէս չըլին ասկի սւ մարթկութէնի առաջ:

էտ էլ չէ ու էն մէկէլ բանն էլ էի ասում:

Ինչ էի ասում:

Հա, էս շուքիրը...

Լազաթին շուքիր է անում ա՛յ:

Իլաքի իփոր Քալանթարի առաջնուրթողները կարթում իմ՝ հեսաի իմ շուքում, հեսաի էրում, վուր ուզում իմ շուքը նրնգնի ու էլի ձիւր խաթրու համա չիմ նրնգնում:

Քալանթարի առաջնուրթողները էլի փառք Աստու, խերով բանիք ին մէջը, էլի մէ էրկու գրոշի խիլք կայ, շուքի ժուգը «Հորիգնի» առաջնուրթողները ու մէկէլ Յ. Տէր-Միրաքեանի՝ լուսահօքի Ղազար Աղայեանի համա գրածները վուր կարթաք՝ ղուրթ է խիտա կու շուքիք, համա—էնչախնէէթ վաննա՝ սառ վաննա պտէք նրնգնի, ան Քուումը լող տաք. էդ բանը օտկում է:

Խիլք ու գրիլ կու սովիք—

Գրողներու օրգանէմէն:

Կաթողիկոսական հարցիրը—

էս սհաթիս էդ թաւուր ին:

Մէկն ասում է՝ ինչ կօնինք կաթողիկոս, կօսէ, մէկէլն էլ ասում է՝ մինք

աշխարհական կաթողիկոս գուզինք, կօսէ, իս կի ասում իմ՝ մինք էն թաւուր մարթ գուզինք, վուր համ կաթողիկոսութիւն անէ, համ տէրուտիրականութիւն:

Իս փիքը իմ անում ու չունքի էն էլ իմ փիքը անում, վուր միք էպիսկոպոզները—կաթողիկոսութէնի պրիսաւօյ նասլէղնիկները, հալբաթտա էն թաւուր մինձ-մինձ միխկիր ունին միք պարտիէքի մօտ, վուր սրանք էլ զըրանց չին ուզում:

Ու չին ուզում էնդուր՝

Վուր էգէբա միք պարտիէքին՝ իրենց հասանելի «աշահամբոյր»-ը չին տւի. չունքի հիմի պարտիէքն էլ ին աշահամբոյր վերցնում ու էն էլ ձախ ձեռքով:

էգէբա՝ ասում իմ՝ հայ էպիսկոպոզները մինձ-մինձ միխկիր ին գործի, հալբաթ պարտիէքի չըլէններուն մարթատիզ չին դրի, սա մահացու միղկ է ու էտու համա էլ հիմի գուզին, վուր էպիսկոպոզներէմէն չընդուրի կաթողիկոս, էտու համա էլ ասում ու առաջարկում իմ սիրելի հաուց ասկին.

Արի, ասում իմ, կոնկուրենցիա մոգոնինք:

Մէ վից ամսով, ովոր կուզէ կաթողիկոս դառնայ—իրաւունք տանք, վուր ինչոր ուզէ էն թաւուր թուղթ—կոնգակ գրէ՝ պլանները մշակէ, պրօգրամներ մոգոնէ, պլատֆորմաներ շանց տայ ու պօլուստանկաներու վրայ կադնէ:

Իս փիքը իմ անում ու էն խիլքի վրայ էլ գալիս իմ ու ասում, վուր լաւ բան կօնինք ա՛յ:

Ովոր լաւ լաւ թանխէք կու տայ, լաւ ճամփայ կու շանց տայ՝ նրան էլ նընդրինք:

Թէ չէ հիմի ի՞նչ է:

Մինք նընդրում ինք խիղճ էպիսկոպոզներուն ու ականջից բռնած բերում ինք ու ասում—

Դուն կաթողիկոս իս:

Վա՛, եգէբա մարթը կաթողիկոսանալու խասիաթ չունէ, ինչպէս վուր հսիլը չունէին:

Ֆիէ:

Ուփրօ լաւ չէ իմ ասածը:

Հաւատա լաւ է, թէ չէ դուք գիղի՞ք. կոնկուրս նշանակիլնք:

Մէ ցնդրոտ տուն վուր շինում իք՝ ինժիներներուն գակազ իք տալի,

պլաններու կոնկուրս իք՝ ինչպէս—բերում, մէ կաթողիկոս շուքիցն ինչպէս էն իմ ասածը ուփրօ խիլքին մօղիկ բան չէ:

Աբա ինձ լսեցէք է՞ ու թէ փոշմա-նիք՝ իփոր մեռնիմ՝ միք թաղի:

Խաթաբայա ամենայն հաուց Կասպար Կալաուզով

ԸՆՍԵՐ ՍՈՒՆԿԻՆ

Դէ՛ն, ննջիր յաւէտ, իմ սիրուն սոխակ, Յոյգերդ անխօս երգիդ հետ մեռա՛ն. Մրափի՛ր անդա՛րձ ալ վարդննու տակ եւ նա կըցօղէ քո սել գերեզման:

Անցած օրերիդ յուշերը մեղմիկ կըպատմի անվերջ սիրող թովչութեամբ եւ անմեռ սիրուդ երգը մեղյուշիկ կերպի անընդհատ մտքում լուծեամբ:

Կանցնին տարինե՛ր, կըգայ ժամանակ, Վարդննիդ չորցած՝ քո ճամբան կընկնի, եւ մտքի միջից մէկիկ ու յստակ կըփորւին շիրմիդ յուշերն անցեալի՛...

Խոնաւ գերեզման... ու նորա միջից կըծլի նորից սիրող վարդննիդ եւ անըջանքով էրեւթ-աշխարհից Յուշերդ կըպատմի վերստին շիրմի՛դ...
Նարգիզ



Օ Տ Կ Ր Ի Տ Ն Ի Պ Ի Ս Մ Օ

«Շիրափլաչի» եւ թամաղա ԱՆԱՅԷՍ ՄԱԼԽԱՍՕՎԵԱՆՑԻՆ

Աւանէս ջան, ամսի 16-ին, քեզ ուստ եկայ Գլօվիսակի—պրոսպէկտի առաջին: Պարլիս—պարուզինան ետով, ինձ տարիւր մօլօջնի մածոնի դոնաղ արիւր: Շատ շնորհակալ ամ, տիւ ալ Բաքու կեալիս ես ալ քեզ լիւա-քեաբաքի դօնաղ կանամ:

Մին աման մածոն տուիր, մին մեծ պեռնը տիրիւր վերաս, քու և Նար-Դոսի «Դիր-և Կեանք» պատմութունան իրեքը տուրիւր քի՛ մինը կտաս «Բաքու» կազէթի կազէթչի Սաչատուր Վերմիշովիանցին, մինը թաթրոնչի տիկին Հրաչեայ բաջիին, մինն ալ քու քէօյնա աշնա և շատախօս Սարքիս Տէր-Ջախարօվիանցին, համա ինձ չի բախշեցիր, մահալ չի տիրիւր, չամ իմանում չի հասկացար, եօխսանամ երգանանգոյթունի տիրիւր քեզ...
Բազանամ ես քու համբալթ ամ քի տանամ Բաքու, քիւչանիլը ընգնամ, պատմութունի պիժանամ...
Բազանամ ես քեզիտի փոշտիլիճն ամ...
Տասնը հիսգ տարի ա մէք մինը մինի հետնան աշնա անք, տղ—հաց անք կերար,




Նւէր անցեալ: ներկայ և ապագայ դիպլոմատները՝ ազգերի բախտ որոշողները:

Դ Ի Պ Լ Ո Մ Ա Տ Ն Ե Ր



--Չերդ բարձր գերագանցութիւն, թուրք-չերնոգորիական թէ ֆրանս-գերմանական կոնֆլիկտին մենք պէտք է .օգուաներ ստանա՞նք:

--Մենք օգուաներ վաղուց է ստացել ենք. Թիւրքիայից՝ կոնցեսիաներ. իսկ Ֆրանսիայից էլ այնչափ փող ենք վերցրել որ...



համմա ասոր Հրաչեայ բաշխին բախշում ես, ինձ չէ. ուրեմն ես պառաւալ ամ, ալ աշ- կըմս ըլլող չկայ... Այ համարդ տղամար- թիք, հինչ քան քի ջայիլ անք իլլմ կիխնե- րովս էք շուտ տամ, հեանցքի պատաւում անք երեսներթ ալ էք շուտ տամ, որ չտեսնէք... Հիմի ես ալ քու աշկի հանիլի համար, Հրաչեայ բաշխի կիրը տալու ամ, կերտիչ- վիանցինն ալ ամ տալու, համմա Տէր-Չա- խարովիանց Սարքիսի կիրը ուտուլու ամ, չամ տալու. հորդէ քինամ ես՝ քինա, հօր խանը մեծ ա՛րարդ արա:

Ազանամ մինը ինձ համար փոշոտով կը խըր- կես, վերա ալ կը կիրես քի՛ փէշքէշ. Շա- մախեցիս Բէօզալ Աղարաջին Աւանէս Ալխասովիանցից, ան վախտ ես Սարքիսի կիրը կտամ իրան, ազանամ չեմ խըրկիլ, Սարքիսն ալ, տիւ ալ՝ անդոջներթ քամազը կը տեսնէք:

Քուրքի մեաստարն ասըմ ա. «դինսիզըն օֆուտսիննան իմանսրզ գեաւիար»:

Տիւ իւար դինսրզ, ես ալ կիրամ իմանսրզ: Անթըմ, աղաչում ե հրամայում ամ չիմ հաչի կազէթներին, որ աս օտկրիտնի պիա- մօս, «Մաթարալ» կազէթան իրանք ալ տիպան ե մին՝ մին դանա իրանց կազէթ- ներան իմ հեսարիս խրկան Սետրակ Ման- դինօվեանցին: Իսկ Աւանէս Ալխասովիան- ցին շտրաֆ ամ անըմ, որ նա հառուր դա- նա ան կիրերան փէշքէշ անի Մանդինովի- անցին, որ իրան ետխիան ցէք քաշի բեաւքա:

Շատայութուն, մնամ Բարուի կնանի- քոնց ե ախչիդերքոնց ապեկունչա՝

Շամախեցի Գէօզալ Աղարաջի



Շ Ր Չ Ա Վ Ս Փ Շ Ա Ն Ե Ր

ԵՐԿՈՒԵ ԵՐԿԱՓԱԳԾԵՐ

(Սէլը մեր «երկու հայ օրսթերթերին»)

Երկու երկաթագծեր՝ դուզընթացաբ գնում էին մի ուղղութեամբ, բայց չէին կարողանում իրար հետ հօլա գնալ:

Նրանք յաւիտեանս յաւիտենից վիճում էին, և նրանցից ամեն մինը հաւատացնում էր, որ միայն ինքն է կէտ-նպատակին հասցնողը:

Եւ բանից դուրս էր գալիս, որ երկուսն էլ ճշմարիտ էին, նայած թէ որ կողմից և ինչ կերպ նայել:

Երբ երկաթագծերն իրարից հեռացան՝ գնացքի խորտակուած եղաւ, գոհեցին ան- մեղ մարդիկ, և երկուսն էլ մեղքն իրար վրայ էին գցում:

Բայց նրանց երկունին էլ որպէս ան- պէտքների՝ դէն չպրտեցին ու՝ փոխարի- նեցին նորերով: Եւ գնացքները նորից ի- րենց ճանքան շարունակեցին, այլ ես ոչ մի երկիւղ չկրեւով:

II

ԷՃՆ ՈՒ ՄԱՐԴԵ

Մի «պատահան» մարդ «անպատիւ» էջի վրայ թառ եղած՝ քաղաք էր գնում: Դժան- քին ուստ ես գալիս գեալի, ու երբ նա մօտենում է նրան, տեսնում է, որ կամըջին և ափին հասնելու համար բաւականին տեղ պիտի անցնել:

—Է՛հ, ոչինչ, բան չկայ, էշա՛ զոչաղ ա, լողալով մինչև ափը սիրուն քաշ կրտայ, — ապալէս մտածեց մարդը և խշին հաչու ա- նկրով և թակելով՝ մտան ջուրը:

Եւը զոչաղ-զոչաղ լող տեց, բայց ափից քիչ դէնը հարաքեաթը կտրեց. Բնց չկտըր- էր՝ ջուրը թէզ-թէզ վազող էր՝ զոչամա գունդն էլ վրէժ թառ եղած:

Մարդը մի կերպ կարողացաւ «նզտուել», իսկ էլը ճար չգտաւ ու սկսեց խեղդել:

—Ա՛խ, ինչ էշն եմ, — բացականչեց մար- դը, իր խղճուկ անասունի ցաւալի՝ դրու- թիւնը տեսնելով:

—Ա՛խ, դու, մարդ, մարդ, հառաչեց էլը և խորատուզեց ջրի յատակը:

Իր. Կոր:

Փ Ո Ր Ո Ս Ա Մ Ի Ն

Մի օր, կանուխ, Թորոս ամին,

Ժամա-ժամին,

Հազալ շարուխ,

Դրալ փափախ,

Ու կոնծելով

«Մի քիչ» արտը

Լնգին տալով—

Բոնեց ճամբան

Գիւղի ժամտան,

Շատ էր գնացել

Բիւ էր մնացել—

Էտ յայտնի չէր,

Թորոսն եկաւ

Գիւղի միջի

Փոսին հասաւ:

«Անտէր մնաս— Անիծած փոս»

Ասաւ Թաթոս,

«Ի՛նչ դարդ ունես էն լայն դաշտը Լնտէղ թողնես Ու թարսի պէս Դաս ու քթիս Տակը ըսնիս»

Ասաց, խօսաց

Բթի տակը

Շատ մը թմրեց,

Միրտը դաղւած

Աչքերն էլ Տօ,

Մարտած շարւած,

Շատ մտածեց,

Փոսի տակին,

Գլխի տեց

Ու վերջ ի վերջ

Արա իսկ յարցեց թո՛ւ
Ու կամորջիլ ընկաւ
Ըն կողմ թողած
Փոսից թոնել—
Վճնեց յանկարծ...
Բնաց, եկաւ.
Չեղբերի մէջ
Կունդ-կունդ թքաւ,
Ու ինչպէս հաւ,
Որ չձորաւ...
Էլ քիթ, մոռով
Ատալ ու շուրթ,
Ոտ ու կողեր,
Ողջ օսկորներ,
Արնով պատեց
Կաշին քերթեց
Ու Թորոսի
Հոգին հանցեց.
—«Արա ընդէք»—
Գոռաց փոսից—
«Արա ընդէք,
Չանիս քեք,
Կամբակ թրջէք,
Բերնիս պարէք:
Ախար, այ գեղ,
Ո՞վ է ընդել
Նրկայն ձգել,
Որ ես այսպէս,
Խեղքս գլխիս
Մէջն եմ ընկել»...
Կլլան Յակոբ

Մարդը մի կերպ կարողացաւ «նզտուել», իսկ էլը ճար չգտաւ ու սկսեց խեղդել:

—Ա՛խ, ինչ էշն եմ, — բացականչեց մարդը, իր խղճուկ անասունի ցաւալի՝ դրութիւնը տեսնելով:

—Ա՛խ, դու, մարդ, մարդ, հառաչեց էլը և խորատուզեց ջրի յատակը:

Մի օր, կանուխ, Թորոս ամին, Ժամա-ժամին, Հազալ շարուխ, Դրալ փափախ, Ու կոնծելով

«Մի քիչ» արտը Լնգին տալով— Բոնեց ճամբան Գիւղի ժամտան, Շատ էր գնացել Բիւ էր մնացել— Էտ յայտնի չէր, Թորոսն եկաւ Գիւղի միջի Փոսին հասաւ:

«Անտէր մնաս— Անիծած փոս» Ասաւ Թաթոս, «Ի՛նչ դարդ ունես էն լայն դաշտը Լնտէղ թողնես Ու թարսի պէս Դաս ու քթիս Տակը ըսնիս» Ասաց, խօսաց Բթի տակը Շատ մը թմրեց, Միրտը դաղւած Աչքերն էլ Տօ, Մարտած շարւած, Շատ մտածեց, Փոսի տակին, Գլխի տեց Ու վերջ ի վերջ

—Ես վճուել եմ մեռնել... Արժէ միթէ ապրել—ամեն ինչ շուրջդ այնչափ անմիտ, ստոր ու դատարկ... Մարդկանց փոխարէն —ինչ որ մանէքններ, անգիր արած ֆրազ- ներ ասողներ, ամեն տեղ կեղա ու դարշանք:

Ո՛չ: Ամենալաւը—այս փուչ աշխարհից հեռանալն է... Օ՛ր, ինչ քաղցր բան է մեռ- նելը... Գրում եմ այս նամակը պատուհա- նի մօտ այն ժամանակ, երբ դուրսն աղշա- մուղջը խտանում, թանձրանում է... Գրում եմ և զգում, որ մէկի հայեացքն ուղղած է վրաս... չէնց այդպէս էլ է... Տիւմարի մէկը կանկնած է դիմացս մայթի վրայ և աչքը տնկած է վրաս: Եթէ միայն նա իմա- նար, թէ ինչ կայ մտքումս... Սակայն, միով բանիւ, նա ինձ խանգարում է կենտրոնա- նայ: Կը վերցնեմ կրգնադիտակս (բինօկլ), կընայեմ նրան, գուցէ շփոթւի և հեռանայ:

Կրկնադիտակս վերցրի... Նա սկի, իրեն հա- մար կանգնած է: Մի փոքր թեթևաոլիկ է երևում, բայց ինչպիսի աչքեր ունի... Մտ ինչ է: Ինձ նշանով է անում: Որպիսի լըր- բութիւն... Ասումս իմ—այստեղ է գալիս: Ես կըրդուեմ... բայց և այնպէս՝ որպիսի համարձակութիւն... Չանգահարում է: Ո՛չ: Ես պիտի մեռնեմ... հապա ինչ է նա մտա- ծում, կարծում է թէ իրեն յետ չէմ մղե- րկայ ոչք իմանալուս Ս ասցանս մայ

Մարդը մի կերպ կարողացաւ «նզտուել», իսկ էլը ճար չգտաւ ու սկսեց խեղդել:

—Ա՛խ, ինչ էշն եմ, — բացականչեց մարդը, իր խղճուկ անասունի ցաւալի՝ դրութիւնը տեսնելով:

—Ա՛խ, դու, մարդ, մարդ, հառաչեց էլը և խորատուզեց ջրի յատակը:

Մի օր, կանուխ, Թորոս ամին, Ժամա-ժամին, Հազալ շարուխ, Դրալ փափախ, Ու կոնծելով

լու... Գուրը բացել են, նա ինձ մօտ է գալի... Տէր Աստուած, որպիսի համարձակութիւն: Մահւանս համար խնդրում եմ ոչո...

Այս չվերջացրած նամակը գտել է Փ-ն, և յանձնել է խմբագրութեան Բ-ն:

Հասցէ բարեւագիրս ի քաղաքն Թիֆլիզ արժեթայ ուստ գալողին

Անտես անձանաչ աղա ջան, բալթի խանում ես, խանում ջան:

Քսան տարի է ժամ շինինք կը. հլա շինինք կը, յամեն օր շինինք կը, յամեն տարի շինինք կը, գենա կիսատ, գենա կիսատ: Չիմ գիղիբ զօրը մենք շինինք կը. գիղիբը սատանէքք քանդին կը. թէ սա գործի մէջ սըռմ կայ, մենք չինք հասկանայ:

Ես վարավուրդ կէնիմ օր, հլա քսան տարի էլ ասպէս սուրբութիւնը պիտի յըլլի. գենայ գլոխ չպիտի գայ: Ջանմ, իմ վենձ աղբարս, մարբէզ վարժապետը «Մշակի» մէջ գիղիբ էր, թէ փսոնով տառ-տառ մանէթ օր վէր գանք. ժամը գլոխ գուգայ կը: Ջանմ յամեն տարի չիմ յուզեր, սալթ մէ տարիմ տաս տաս մանէթ վար դնինք, ալ բան չինք յուզեր. Ահան ես մէ գանիաթքեար մարդըմ. տասը մանէթ վար կը դնիմ, ինձնէն գանկինը դոս ինձնից շահիմ էվիլ տայ,

ասպէս էվիցնելով, էվիցնելով նարդիսի պէս հասնենք Չալթուկովին, Մէյլանովին, Բաղդասարովին, ան վախթը էրկու ժամ շինենք վը: Փարայ չկայ կըսին, քետատութիւն է: Սուտ է, չիմ աստըհայ, փարայ շատ կայ՝ սէր չկայ, հոգի չկայ, աստուածպաշտութիւն չկայ: Աուրպան էդնիմ յոտացդ, սագանդարով չայիբ չիմաններուն մէջ քէֆ կէնիս կը փարայ կայ, ժամի հմար փարայ չկայ:

Հիմի ալ դուրբանս յոտացդ, խանուսիւրուն հետ բետեկիաներուն մէջ քէֆ սարգիս կը, փարայ կայ, ժամին հմար փարայ չըկայ:

Ջանս օր դուն իս, վազգալին կողքին արփիանկաներուն հետ կեր ու խում սարգիս կը. խանուսիւրուն ճակտին կապուտ 5-նոց կպցնիս կը, բիթունի խաթըր շահիս կը, փարայ կայ, ժամին հմար փարայ չկայ:

Ջանմ, աղբէր տղոց ուղուրին շաղցի քէֆ սարգիս կը, խորոզը յերթիկը յանիս կը. մէ գիղիբէլ մէջ 100-նոցը դավայ շինիս կը փարայ կայ, ժամին հմար փարայ չկայ:

Վարժապետին մէկը ինքը իրեն շատ գիտնական գանքը կէն է կը, չի ամչնայ, ասոր անոր կըսէ թէ, «տօ դէ ի՞նչ էք ժամի պօչէն բունիբ, ժամն ինչ պիտի էնինք, ըշտայ ատ հին ժամն ալ մեղի հերիք է»:

Վարժապետը օր ասպէս քարոզէ կը. ալ մէկալոնց ի՞նչ ըսինք:

Խեղճ տէր Մինաս, սէֆիլ տղը Մինաս. տէյմօր ժամը գլոխ կայ... Սէֆիլ տէրտէրը ամիսը տասը ժում ժողով կանչէ կը, ասոր անոր խնդրէ կը, «լալ գլլի» կսին ու գլխից սաղ կէնին: Հմը հոգուս մեղք չէնիմ. անցած օրը ժողով էր կանչիր, անքան էին թափիր, անքան էին թափիր, օր ստեղ ցկել տեղ չկար գալին մէջ, հմը ձիթի հանքի դոշաղ հաւքէր կը: Տէր Մինասը մէկ, ժամկոչը էրկուս, քարտուգարը յիրէք, 12 հատ ալ անաջ տղամարդ. բոլ չէ:

Տէր Մինասը խալիսին թոփ էնելու դայտան չիտէ, գրէ կը թէ, էկէք, փարա բերէք, ժամը շինինք, է, եղաւ. գուգան:

Ես օր տէրտէրի տեղը յըլլիմ. գրիմ կը թէ՛ «խաշ իմ դրեր չեշխտ-չեշխտ խմիչքի ստոլ իմ սարգիւ, զակուսկայ, կախէթու գինի հազր իմ էրիր, արիք ուտենք, խմինք, քէֆ էնինք»: Աս յայտարարութիւնը օր կարդան գլխարաց վազին կը, հլա բոլորի գեղերից ալ գուգան կը: Արթիղ դուրը փակ ջէրերը գարդկէ:

Հալսայի Մարգար



Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ԻՄ ԱՆՆՁԱՆ ԿԵՆՆՔԻ ՆՁԱՆՆԻՈՐ ԴԵՊՔԵՐԸ

(Ինքնաբերական գծեր սեփական կենսագրութիւնից)

II

Առաջին գլուխ, երկրորդ սօֆ.

ՄՈՐԵՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մանկութիւնը Բրօզկու շաքարի պէս քաղցր բան է. աշխարհից բէխաբար, նա միկնոյն ժամանակ այդ չքնաղ աշխարհի լիազօր թագաւորն է հանդիսանում. նա ամենուրեք իր խօսքը հրաման է հրատարակում ու բաւարարութիւն պահանջում: Նա թուղտուտ է աջ ու ձախ՝ անհոգ հորթուկի պէս. նա այդ հասակում շատ է սիրում իրան ցոյց տալ, պարծենալ, «մեծամեծ» գործեր կատարել:

Անցան բազում ցերեկ-գիշերներ, եղայ 7 տարեկան, 7 տարեկան հասակիցս էլ գըլուխս որ ազատեցի, ոտքերս ութբորդ տարւայ շեմքը դրի: Այդ հասակում ձեզանից ձվ է կեանքի կամ խելօքութեան մասին գաղափար ունեցել, օր ես ունենայի ուստի քաղաքական այդօրինակ հանգամանքը նրբացուցիչ դէպք յանցանաց ունենալով՝ կասեմ ամենայն իրաւամբ, որ այդ հասակում թէև խելօք ու փիլիսոփայ չէի հայոց անզուգական փիլիսոփայ ու զուգական Սոկրատ Ս. Թառայեանի պէս, բայց

սարսաղ էլ չէի՝ իրան կորցրած հայոց «մեծ» մանկավարժի պէս:

Ուսումնարան գեռ չէի գնում, դրա համար էլ սաղ օրը խաղում, վազում, թուղտուտում էի:

Առաւօտները վաղ վեր էի կենում, հագնում էի իմ երկար ու լայն խալաթը՝ ճիշտ հօրս շալվարի նման, թէյը մի կերպ կուլ ու մուլ տալուց յետոյ՝ կողքից կախում էի բարակ շիթայի վրայ առաջուց ամբարձած սեղանի, կամ աւելի ճիշտը՝ խոհարարական մեծ դանակը, վերցնում էի ձեռնափայտ, մի քիչ էլ հաց ու պանիր թաշկինակի մէջ կապում ու եսլլա, բարձրանում մեր մօտիկ սարը, ուր թագաւորում էի ազատ ու անվախ, առանց ծակ ու ծուկ մտնելու, առանց վախենալու անօրէն հպատակներիս օրինական վրիժառութիւնից...

Մենակ չէի՝ պ. Ս. Մանդինեանի պէս, այլ ունէի անձնէր ընկերներ՝ երկարանուն «Յովհաննէս Մալխասեանի և կարճանուն «Նար-Դոսի» պէս: Բոլոր ընկերներս միասին էինք հաւաքում. դրսից խորհուրդ տուողներ չունէինք. իբար երեսին համարձակ նայում էինք... դրանց մեծաւորն ես էի, միշտ գնում էինք որսի: Իմ գործը մորեկներ բունիլն էր, որպիսի արշուանքի համար առաջուց պատրաստած ունէի ստեղ ու երկայն թել: Այդ մորեկներին սաղ-սաղ անց էի կացնում ստեղի միջով թելի վրայ և նրանցից մի շարան կազմելով՝ մինչև ճաշի վախտերը վերադառնում էի տուն—իմ գործարանը...

Տեսնում էք, իմ ազնւագարմ ընթերցողներ, 7 տարեկան հասակումս անգամ գործարան ունէի. հապա չէ ու, այժմեան երիտասարդների պէս՝ ականջներումս բամբակ կըխրէի ու պ. Ատրպետի երկար առաջնորդները կարճատես աչքով կըկարգայի, առանց մագաչափ անգամ ի կատար ածելու... ես առաջուց, շատ առաջուց զգում էի, որ պ. Ատրպետն այդպիսի բաներ է գրելու, շատ թանկագին խորհուրդներ շատ աժան գնով է մեզ վրայ ծախելու, այդ պատճառաւ էլ ես այն ժամանակեանից, սրանից մի քանի տասնեակ տարի առաջ սկսեցի խանութ բանալու փոխարէն գործարան հիմնել...

Գործարանս գտնւում էր մի տան պատըզամբի մի քնջում, որտեղ լազալթին կերպով սարքած ունէի մի եքայ սեղան, վաքսի ամաններից պատրաստած մի ծուռտիկ կշեք, մեծ ու փոքր քարերն էլ կողքին պզգեցրած:

Հասնելով տուն՝ մորեկների շարանը բերում ու կախ տալիս գործարանիս պատից: Ապա գնում էի խոհանոց, վերցնում էի մի դանակ ևս, ու գալով իմ տեղը՝ դանակներս սկսում էի իբար քամակ՝ սրելու և մորեկներին քերթելու համար... Քերթել ստելով՝ դրուստ որ կաշին մաշկել չհասկանաք հմ, ոչ. այլ վերցնում էի մորեկներին շարանի ծայրը բացում, վեհապանձ ու յաղթահարած մորեկներին դազգեհանի վրայ շարում ու սկսում էի նախ և առաջ գանակները սեղանի վրայ կատլէտ ձեծելու

«ՊԵՏՐԵՖՈՒՍԻ ԽԻԼՔ»



—Տօ, Կարապետ, էս գազէթնիւրը կար- դում թա. մօ բազի գամ էնէնց մազալու բանիւր ին գրում, վուր քէֆդ բացուում է: —Ի՞նչ է, Հէրապետ, էլի բան իս իմացի: —Վա, իմացի վիճերն է. մօ գրում ին, միթում Պետրեբուսիում երկու ջէհէլ քորփա թմբթմբալի աղջկերք քացախի կիսլատով լիքը շուշէք իրար ին չխկացրի, իմիլ ին ու մեռիլ: Մեռնելուս էլ թուղթ ին գրի, թէ «մէկամէկու շատ էինք սիրում, ու էնդու...

պէս թրխկացնել ու ապա նրանց ոտները, գլխներն ու թևերը կտրտել սկսելով՝ որպէս թէ խաշի համար՝ առանձին էի դարսում, իսկ ջանը՝ առանձին դնում: Կանչում էի հարևանի տղերանցը և հանգիստուր տօնա- վաճառ սարքում, — ապրանքս գովում, մուշ- տարի չաղացնում, աննողների հետ դաւի սնամ, կուում վիճում էի, գոռում գոչում էի, հայ «աշէք, հոտե արէք, հայ լաւ մո- ընիս, չաղ մորեխ») ... Մի խօսքով՝ շատ մեծ բանի էինք:

Ու այսպէս համարեա թէ ամեն օր:

Մեր բնակարանին կից մի որբ և այլի կին էր կենում, անունը Նատօ: Նա, ինչ- պէս երևում է, տեսել էր իմ արածները ու դրա համար էլ մի իրիկուն կանչեց իր կուշտը և սկսեց դործիս մասին հարց ու փորձ անել: Ես էլ բաւականին լուրջ կեր- պով պատմեցի, որ մորեխիս առևտուրը՝ փառք Աստծոյ՝ շատ լաւ է գնում, թէ գը- լուխն ու ոտները ջոկ եմ ծախում, իսկ մի- սը՝ ջոկ: Պատմում էի բռնելու, քերթելու ձևի մասին: Ի լրումն ամենայնի՝ ասացի, որ աշխատածս փողերն էլ տալիս եմ մօրս, բանկը տանելու համար:

Նրա մօտ մի ուրիշ կին էլ կար, մի լաւ կուշտ ծիծաղեցին:

— Էս տարուր կնիկ եմ դառի, շատ չար

*) Այդ աշէք-մաշէքը ես սովորել էի հա- յոց Ախաթալաբում, ուր հայրս ինձ մի ա- մառ «հով կուլ տալու» համար էր տարել:

համա էլ մեռնում ինք, մէտի էլ թաղեցէք... —Այ քիզ բան... Տղի ու աղջկայ սիրիւն ու մեռնիւն իմացիլ էի, համա երկու աղջ- կայ իրար սիրիւն ու էդ հանգի բէհեսար նամաղուլը չէի իմացի... համա թէ ունեցիլ ին թամամ Պետրեբուսի խիլք տօ... —

ԲՈՂՈՔԱՊԻՐՔԸ

Այդ գիրքը պառկած է յատկապէս իրեն համար, երկաթուղու կայարանի մի սենեա- կում շինած դարակի մէջ: Գարակի բանա- լին պահում է «կայարանի ժանդարմի մօտ», բայց իսկապէս նրան ոչ մի բանալի հարկաւոր չէ, որովհետեւ դարակը միշտ բաց է: Բաց արէք գիրքը և կարդացէք.

«Ողորմած տէր! Գրչի փորձ!»:

Դրա տակ նկարւած է մի դէմք՝ երկար քթով և եղջիւրներով: Դէմքի տակ գրած է.

«Դու նկար ես, ես պատկեր, դու անա- սուն ես, իսկ ես ոչ: Ես քու ուէխն եմ:

«Մինչև այս կայարան գալը, վագոնի լուսամուտից երբ նայում էի բնութեան գեղեցկութեան վրայ՝ գլխարկս թռաւ: Յով. Զարգարեան:

«Ո՞վ է գրել—չգիտեմ, իսկ ես յիմարս կարգում եմ:

«Իմ բողոքն եմ յայտնում կոնդուկտոր Կուչկինի կողմի վարմունքի համար, որ

ու բարի իմ տեհի, ու էս հանգի մատրա- բազ բան չէի իմացի: Կալիէն (մորեխի ա- նունը վրացերէն) ի՞նչ է, վուր նրա վուտն ու գլուխը ջուղ ծախին, միթում խաշ է, ու միսն էլ՝ ջուգ:

Մի իրիկուն էլ էս մեր Նատօն ներս մը- տաւ մեր բնակարանը ու մօրս հետ դէպից- դէնից խօսելով, վերջը լուրջ կերպով ա- սում է.

—Քեթևան, յիս իմացիլ իմ, վուր բան- կումը քումս (շատ) փողդ իս ունեցի. դը- բուտ է:

Մայրս զարմացած, մի քիչ էլ վախեցած, նստած տեղումը կարծես ինչ որ խթխթոց զգալով՝ էն բոպէին Նատօյի երեսին նայեց ու բեկբեկուն ձայնով հարցրեց.

—Աղջի, ես ունեմ բանկումը փողեր- ի՞նչ փողեր, ի՞նչ ես ասում:

—Վա, ի՞նչ իս թախկացնում, խօմ չիմ խլում, հէր օխնածի վուրթի. այ տղէդ է ասում:

—Ժօրթիկ, ես ի՞նչ փողեր ունեմ բան- կումը,— դառնալով ինձ հարցրեց մայրս, ամբողջովին ապշած, մի խոշոր հարցական դարձած:

—Էն էլի,—ասում եմ ես սառնասիրտ, հանգիստ դէմքով.—մորեխներից աշխատած փողերի մասին եմ ասում:

Մայրս աւելի զարմացած, խոշոր հարցա- կանը բազմատունի զարմացականների վե- բածւած, մի քիչ այլայլւած, բաւականին վախեցած, մեղմիւ բարկացած, խստիւ սա-

նա ցոյց տուց դէպի իմ (կենդանի) մեծ խիլքը բոլորովին չէր ազմուում: Բայց հարցրեց ինձ, որ ամեն բան խաղաղ լինի: Բողոքում եմ նոյնպէս և կոնդուկտոր Կրալովի վար- մունքի դէմ, որը անտաշ կերպով բռնեց իմ թևքից: Ես բնակուում եմ Անդրեաս Պօղո- սեանի տնեւում, որը և լաւ է ճանաչում իմ բնակարանի մասը: Գործակատար Մովսի- սեան:

«Նիկողոսեան սօցիալիստ!»

«Գտնելով կատարւած քստմնելի դէպքի թարմ տպաւորութեան տակ... (ջնջած է): Այս կայարանից անցնելով՝ ես մինչև հո- գուս խորքը վրդուկեցի հետեւալից... (ջնջ- ջած է): Իմ աչքերի առջև պատկերացան երկաթուղիների կարգերը իրենց գոյներով (այնուհետեւ ամեն ինչ ջնջած է բացի ստո- բազրութիւնից): Թիֆլիսի գիմնազիայի 7-րդ դասատան աշակերտ՝ Սերժ Մինասով:

«Գնացքին սպասելու ժամանակ երբ տե- սայ կայարանի կառավարչի դէմքը՝ ես շատ անբաւական մնացի: Անվհատ ամառանո- ցաւոր:

«Ես գիտեմ այս ո՞վ է գրել: Այս գրել է Մ. Դ. -ն»:

«Պարոնայք. թիֆլիսեցի շոււլերը»:

«Երեկ ժանդարմի կինը բուֆէթի տէր վրացի Կոստայի հետ գնաց գետի միւս ա- փը: Ամենայն յաջողութիւն ենք ցանկա- նում: Պ. ժանդարմ, դու մի վհատի:

ած, թեթև կարմրած, ուժգին սարդնած, նայում էր երեսիս՝ սուսիկ-փուսիկ, մի որևէ բացառութեան սպասելով, իր յիմար դրութիւնից մի խելացի ելք ակնկալելով. ո՞վ գիտէ, գուցէ կարծում էր, թէ երկուսս էլ խելքից հեռացել, գծութեանն ենք մօ- տեցել:

Ես էլ միամիտ դէմքով, աշխարհից բե- խաբար, Նատօյին եմ նայում: Նատօն էլ մի ձեռքը դրել էր բերանին ու, ինչպէս նկատեցի, աշխատում էր ծիծաղը պահել. բայց չկարողացաւ, մի խիստ վրթկոց գցեց ու քահ-քահ ծիծաղել սկսեց: Մայրս էլ յետ չմնաց, նա էլ սկսեց ծիծաղել, թէև, հաւատացած եմ, ինքն էլ գլխի չէր ընկ- նում, թէ ինչի վրայ է ծիծաղում:

Վերջը Նատօն բացատրեց, թէ բանն ինչու՞ն է, ինչպէս աշխատել եմ իրեն հա- մոզել, որ ես իսկապէս մորեխների «ղո- սաբ» եմ և դրանից լաւ փող եմ աշխա- տում... և այլն:

—Լաւ տարի քեզ գայ, այ որդի, այդ ի՞նչ ես հնարել, որտեղից ես մտաբերել. հա՛, էլ ոչ մի տեղ չասես այ, թէ չէ կը- կարծեն, որ գրուտ որ փող ունեմ ու գահ- լա կըտաննն:

Մորեխների սեզօնն այդ օրերին արդէն աւարտելու վրայ էր. ես էլ խօսք տւի մօրս ձեռք քաշել մորեխների գործով դրադ- լելուց. ես իմ տւած խօսքս կատարեցի ա- մենայն սրբութեամբ... մինչև միս ամառը: Եզոպ ծայրայեղ վարդապետ

«Այս կայարանից անցնելու ժամանակ սաստիկ քաղցած էի և մտածում էի մի որևէ բան ուտել, բայց չկարողացայ պասուց կերակուր գտնել: Մարկուազ Վանքեան»:

«Ուրիշտի՛ր ինչ որ տալիս են»:

«Ով որ կըզտնի պապիրոսի՛ կաշե տուփը, թող տայ կայարանի գանձապահին»:

«Որովհետև ինձ զրկում են իմ պաշտօնից, որպէս հարբեցողի, այդ դէպքում յայտարարում եմ, որ մենք բոլորս աւազակներ և գողեր ենք: Տելեգրաֆիստ Արխիպով»:

«Բարեգործի դիմակ հագէք»:

«Կատե՛ս, ես խելագարութեան չափ սիրում եմ քեզ»:

«Մնգրում եմ բողոքագրքի մէջ կողմնակի բաների մասին չգրել: Կառավարչի փոխարէն Իւանով 7-դ»:

«Թէ՛ն դու եօթերորդն ես, բայց և այնպէս էլի յիմար ես»:

Անտոն Զելտով

ՊՈՆԿԱՐ ՏԵՐԵՒՆԵՐ

Ճիտ պատասխան

Մի խնամակալ տիկին գալով Իրանդանոց հարցնում է դէմքին խոցեր դուրս տա՞ծ մի ջահել կնոջ:

— Իուք բողոքական էք թէ կաթոլիկ:

— Ո՛չ, տիկին, ես սիֆիլիսիկ եմ:

Համբարի պէս կոճէ.

Ամառանոցային վերանդայում:

— Սերգէյ Ալէկսանդրովիչ, ճաշից ետ դուք ինչպիսի կոֆէ էք սիրում:

— Ճիշտ ձեր համբարի պէս:

— Ձեմ հասկանում:

— Թու՛նդ, քաղցր և տաք:

Ո՞վ տեղի յաճախ.

Դատարանում:

— Ի՞նչ ինչ է: Իուք էլի՞ ընկաք: Իուք խիստ յաճախ էք այստեղ երևան գալիս:

— Բայց դուք, պ. դատաւոր, աւելի յաճախ էք այստեղ լինում:

Քայլեր

— Անայէք խնդրե՛մ, մեր շարքի ամառանոցում երգող այն երգչուհին—կոնտրանյալտօ է:

— Ո՛չ, խսկական հրէուհի է:

Հաւեւանութեան.

— Եթէ ձեր հաւը կրկին մեր բակը կը գայ—սրանով նախազգուշացնում եմ. գլուխը կը պոկեմ և չըթմա կը շինեմ:

— Բայց աչքի առաջ ունեցէ՛ք, որ երբ ձեր շունը ներս է պրծնում մեր բակը—ես բռնում եմ:

— Մնգրե՛մ: Նրա հետ էլ կարող էք նայն ձեռով վարել...

Տարբերութիւն

Պարեգիկ.— Մայրիկ, միթէ ձեռտ է, որ կան պնպիսի մեծ կանֆեսներ, որ նման են մայիկ բարերին:

Մայրիկը.— Այդ բեզ ո՞վ է ասել:

Պարեգիկ.— Ինձ անց քեռի Գալուստը... ուրեմն նա սճա էլ ստում:

Մայրիկը.— Յիմար, քեռի Գալուստը կատակ է արել:

Պարեգիկ.— (ըջօրէն) Այո, այո, ես հասկանում եմ. եթէ հասակաւոր մարդիկ ստում են, դա նշանակում է կատակ, իսկ երբ փոքրիկներն են ստում— նրա համար նրանք պատժում են:

Խօսեցէք ատելի բարձր բաների մասին

Հայր.— (Իմեղով իր երեք աղջիկներին). Աննա, Չ ժամից աւելի է, որ ես լսում եմ ձեր խօսակցութիւնը: Իուք բոլոր ժամանակը խօսում էիք ձեր զգեստների, շքեղագեստների մասին: Միթէ դուք չեք կարող խօսել աւելի վե՛հ, բարձր բաների մասին:

Աղջիկներից մէկը.— Լաւ, հայրիկ, հիմա մենք կը խօսենք աւելի բարձր ստարկայի... այն է շեապայի մասին:



— Մերգա Միխայիլիչ, հի՛նչ մտադիր ընելու: Էս ամառնէս տոնը զրկում՞ ըս դաշա:

— Է՛, Սօնա բաջի, հանցա կլոխս խառնը, որ գիղում չըմ հինչ անիմ, կլոխս թորը կորցնիմ:

— Դէ, Միրգա Միխայիլիչ, հինչքան էլ որ կլոխթ խառնը ինի, էլիա ըտրա մհար պեղմա մի պեան անիս, աղեաթան տիւս կեալ ինիլ չի ախար:

— Աղեաթ, հա աղեաթ, անիծել իաի աղեաթը. քնդվեցէնք, էտ աղեաթ տնդին վիզը հախմեան տէրը կտորի:

— Հինչ անիս, Միրգա Միխայիլիչ, մի անգաման սըվըցըալ ընք մեր կնկդոնց բիրդանք-բիրա էլ ինիլ չի, որ ասիս թա էլ ըզդրանա դէնը դաշա զըրկական չըմ:

— Տիւ էլըս լեաւ ասըմ, պեղմա զրկելի, ամա դէ ախար էդ աման տարէ զրկիլաւ թորը կըքինեա, ախար տոննես քանդելից, անգուճ ինող չկայ:

— Ես մի խտի պլանըմ քաշալ, մին անգուճ կալ, եշի տես հունցա. ընցկացած տրնէ տոնը զրկալիի զազրանիցա, էտ արէ, կըրկիմ Պետիգորսկի, եկող տրնէ կըրկիմ Մաշտաղա էս մեր Բալխաստուն մողկ թորքի բաղերը, էն կեալաշաղին էլ կըրկիմ Ար-

մեանիքեանդ ու ըզրանա ետը կըման կըշտես ու խտի էլ կըկարնայ: Գնդիմի՛ր խառնը եաւաշ քու ուզած խաւիթի՛ն, զիբիլի՛ս յիլաւ կըպրծնի, մաշալա:

— Մաշալա կլոխ, մհնդ որ տոնս քանդ-

Դիւրջուն Թորոյ Արմենակ

Բ Ա Ն Ե Ս Տ Ե Ղ Թ Ը

Յայտնի չէ թէ ինչով պէտք է բացատրել, սակայն իրողութիւն է, որ եթէ հայ մարդուն արքունական ծառայութիւնից վճարեցին, նա անմիջապէս ազգասէր է դառնում:

Իրողութիւն է նոյնպէս, որ եթէ հայ վաճառական անանկացաւ, գրասէր է դառնում, նոյն իսկ բանաստե՛ծ:

Գողթան գաւառում կար Մարանդուլինց Մկրտիչ անունով մի վաճառական, որ իր շիտակ ընաւորութեան շնորհիւ անյաղդութեան հանդիպեց և զրկեց իր ունեցած չունեցածից:

Նա առանց երկար մտածելու վճռեց ուղղակի բանաստեղծ դառնալ: Լսել էր, որ կայ Ջիւանի անունով բանաստեղծ և հնթադրում էր, որ վերջինը իր շնորհք ստացել է, ուրիշ անւանի աշուղների նման, Մուշի Սուլթան Սուրբ Կարապետից: Նպատակին հասնելու համար, սուրբ Կարապետի պասը ամբողջովին պահեց: Ուրեմն միայն մտում էր գնալ համբուրել սուրբ Կարապետի վանքը ու բանաստեղծ դառնալ:

Բայց ինչպէս պէտք է գնար այդ խեղճ մարդը Մուշ, քանի որ շատ հեռու էր, իսկ գնալու համար բաւականաչափ փող էր հարկաւոր:

Իբրև նեղ տեղից դուրս գալու ընդունակ գողթնեցի, այս դէպքումն էլ հնարագէտ եղաւ: Նա յիշեց, որ Յովհաննու վանքը Իւրանց գիւղից հեռու չէ, իսկ ինքը հաստատ համոզեա՞ծ էր, որ Յովհաննէս ու Կարապետ միեւնոյն բան է: Եւ այսպէս, առանց տատանելու, մաքուր խղճով ու լի յուսով ոտքով ճանապարհ ընկաւ դէպի Յովհաննու վանքը: Այնտեղ մոմբը վառեց, համբուրեց, աղօթեց ամենաջերմ սրտով և պարզ բոլորովին պարզ կերպով զգաց, որ մուրազին հասել է:

Վանքից դուրս գալով, նրան պատեց անօրինակ մի ոգևորութիւն: Այնպիսի ոգևորութիւն, որ ակամայից արտասանեց հրաշալի բանաստեղծութիւն, որի վերջաբանը մանաւանդ անդին գոհար էր:

Մեր նոր բանաստեղծը երկիւղ ունենալով, որ գուցէ մոռանայ իր անդրանիկ ստեղծագործութիւնը, շտապով արձանագրեց վանքի պատի վրայ խոշոր տառերով վերոյիշեալ վերջաբանը, որ մինչև օրս ջնջւած չէ և այցելուները բախտ ունեն կարդալու:

«Ոսկեփետուր երկայնակտիչ Ռ՝վ Յովհաննէս Մկրտիչ Թեփրափետուր վաճառական Մարանդուլինց Մկրտիչ»:

Դ. Բաճ.



Նէք անցեալ, ներկայ և ապագայ դիպլոմատները՝ ազգերի բախտ որոշողները:

Փրանս-գերմանական կոնֆլիկտ



—Ականջիցս մի բռնիք, մի բռնիք ասու՛մ եմ—
մի բռնիք... դու ու՛մ հետ ես հանաք անու՛մ. զուգե՛ս
օյին դամ գլխիդ. այս ըողպէ՛իս՝ շէր ճւ՛սմ՝ խելքդ
կըթացնեմ:

—Մարտիկոն իմս պիտի լինի:
—Ճս էլ եմ ստեղծե՛լ սիրում...

Ա Ձ Դ!

Քաղքիս մէջ մէ հատմ դալպ 50-նոց է փէյտայ էղէր, գնացեր է Թիւֆիգ. գենայ յետ է էկեր, ատոր տիրոջը փնտոին կը, եփոր գտան. գրիմ կը: Ասիկ մէ յէրկան հէքեթմ է, ում վրայ իսպաթ պիտի յըլի չիմ գիտէր: Քանիմ օր ալ բաքլայինք, տէյ-մօր պանրի տէրը գտնինք:

Ղալալչի Մարգար

«ՓՈՒՐԱԹ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱ-ՏԱՍԽԱՆՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Տ. Նագարեանցին.—Ո՛ւհ, չգիտեմ ձեզ ինչ պատասխանեմ. ի պատիւ անգլիական գահաժառանգ Գէօրգի, կտօնենք ձեր երկուհարիւրամեակը. միայն այն պայմանով որ ձեր յորելեանին ներկայ գտնուի Գէօրգ թագաւորը. հակառակ դէպքում չենք կարող տօնել:

Ալ. Բալանթարին.—Վահ, ինչ սպահ մարդ է էլի էս Ալ. Քալանթարը, ալի մէ ջեր տօնեցինք, էլ ինչ իս ուզում. քանի ջեր գրեցի վուր չինք կարող տօնի, չինք կարող, չինք կարող, վա գօռի բան է...

Մար-Դոսին.—Կըտօնենք այն պայմանով, եթէ այդ ձեր էփած շիւափուլից Ս. Մանգինեանցին էլ բաժին հանէք:

Ստ. Մալխասեանին.—Եթէ կարողացաք, այս տարի էլ Յոֆանեան դըպրոցի գլխին մի օյին խաղալ, կըտօնենք և այն էլ ինչպէս, սատանան գիտէ թէ ինչպէս:

Ջաքարին.—է, դեռ լաւ աֆիշայ կազմելը չէք սովորել, երբ այդ կուրսը լաւ վերջացնէք, կըտօնենք. և քեզ կըբարձրացնենք Արտիստական ընկ. թատրոնի «վերին էտաժը»: Ղարուլ իս, թէ չէ:

Մակ. Չմ Ղկեանին.—Ձերը չենք կարող տօնել, իսկ ձեր օրացոյցներինը կըտօնենք. այն էլ միայն հազարամեակը, Իրանում:

Լէօ.—Ձենք կարող գեռ ուսումնարան էք գնում, երբ որ ուսումնարանից կըվերագառնաք երկրորդ անգամ կըտօնենք, «Նորիզոն» Պօրտ-Արտուրում. եթէ համաձայն էք, կարգացէք երկրորդ պայմանները և գրեցէք:

Ալ. Իսահակեանին.—Աշխատեցէք ձեր հասակը բարձրացնել Յով. Յովհաննիսեանի հասակից. այն ժամանակ համաձայն ենք տօնելու ձեր երկուհարար-ամեակը:

Ալ. Ծատուրեանին.—Դեռ «Գարուն» հրատարակեցէք, իսկ երբ որ «գա-

րունը» կըգայ, այն ժամանակ երկրորդ անգամ կըտօնենք ձեր յորելեանը այն էլ հարիւրամեայ: Սաւ. Յարութիւնեանին.—Շատ էք խօսում է... այդքան էլ չէ կարելի համը հանել. դուք գանգատում էք, որ բոլորին էլ տօնեցինք, իսկ ձերը ոչ. զարմանալի նախանձոտ մարդ էք. եթէ շարունակէք այդպէս մնալ, չեմ կարծում, որ ձեր հազարամեակն էլ տօնենք. աւելի լաւ է խելքներդ ժողովէք և ազգի համար որքան կարող էք շատ մտածէք. այն ժամանակ համաձայն կըլինենք տօնելու. այն էլ առանց «սուպսիդիայի»:

Թորէն-Ժան-դը-Բիւ

ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԵՂԵՎԱՆԻ

(Փոխանորութիւն)

—Ահա տալիս եմ քեզ երեք հարիւր ռուբլի, վերցրու:—ասաց Իւան Պետրովիչը իր քարտուղար Միխայիլ Քարովին, որը իր հեռու ազգականն էր. թող սա վերջին անգամը լինի: Չէի ցանկանում տալ, բայց ինչ արած... Կնոջիցս շնորհակալ եղիր, եթէ նա չլինէր, չէի տալ—նա խնդրեց...

Միշան վերցրեց փողերը և ուրախութիւնից աչքերը կարմրեցին ու արցունքը քիչ մնաց թափւէր. գլխին զօռ էր տալիս մի յարմար նախադասութիւն գտնելու շնորհակալութիւն յայտնելու համար, բայց չըփոթւում էր: Ուզեց գրկել և համբուրել Իւան Պետրովիչին, բայց չհամարձակեց—նրա ստորադրեայն էր:

—Կնոջիցս շնորհակալ եղիր, նա խընդրեց... դու քո աղերսանքով նրա վրայ ազդել ես... նորանից էլ շնորհակալ եղիր...

Միշան դուրս եկաւ առանձնասենեակ և գնաց շնորհակալութիւն յայտնելու իր հեռու ազգականուհուն, Իւան Պետրովիչի կնոջը: Վերջինս փոքրահասակ, շիկահեր ու գեղեցիկ՝ նստած էր առանձնասենեակում, փոքրիկ գահաւորակի վրայ և վէպ էր կարդում:

Միշան կանգնեց նրա հանդէպ և ասաց.

—Ա՛խ, չգիտեմ թէ ինչպէս շնորհակալ լինեմ ձեզնից, Մարիա Սիմեօնովնա: Իւան Պետրովիչի կինը քաղցրաբար ժպտաց և գիրքը վայր դնելով, քաղաքավարութեամբ իր մօտ տեղ տեց Միշային: Նա նստեց:

—Ինչպէս շնորհակալ լինեմ ձեզնից, ասացէք, ինչպէս, ինչով... դուք ինձ համար մեծ բարեբարութիւն արիք: Չէ որ այս փողերով ես պիտի հարսանիք անեմ և պրսակեմ իմ սիրելի, թանկագին Կատեայի հետ...

Միշայի աչքերում հոսեց արտասուք, նրա ձայնը երեքաց:

—Օ, որքան շնորհակալ եմ ձեզանց—ասաց նա և գլուխը կորացնելով, համբուրեց

Մարիա Սիմեօնովնայի փափակ և սիրունիկ ձեռքը:

—Դուք որքան բարի էք. իսկ ձեր Իւան Պետրովիչը... նա էլ շատ բարի է ու ներողամիտ... հրաշալի հոգի ունի... դուք պէտք է գոհ լինէք Արարչից, որ մի այդպիսի ամուսին է պարգևել... սիրեցէք նրան... աղաչում եմ, սիրեցէք նրան...

Միշան մէկ էլ կորացրեց գլուխը և այս անգամ համբուրեց նրա երկու ձեռքն էլ միասին:

—Չնայած, որ նա ձեր է, տգեղ, բայց և այնպէս... լաւ սիրտ ու հոգի ունի... Քրտեղ կըգտնուի նրա նմանը... Չէ կարելի գտնել... սիրեցէք նրան... դուք, երիտասարդ կանայքդ շատ թեթևամիտ էք, դուք տղամարդու միայն արտաքինի վրայ էք ուշադրութիւն դարձնում... իսկ... նա...

Միշան բռնեց նրա ձեռքերը և դողալով առաւ իր ափերի մէջ: Նա արդէն սկսել էր հեկեկալ:

—Նրան մի դաւաճանէք—շարունակեց նա—դաւաճանել այդ տեսակ մարդուն, կընշանակէ... Ես ձեզ սիրում եմ... սիրում եմ անսահման, խելագարի պէս, որովհետեւ դուք նրան էք պատկանում...

Դուք պատկանելով նրան— սըբանում էք... Եւ ես ձեզ համբուրում եմ, իբրև մի... սըբութեան... Ինձնից մի վախենաք... չէ որ ես նշանած եմ... ապահով եղէք... Միշան դողդողալով և հեկալով մօտեցրեց երեսը նրա երեսին և նրա... այտից...

—Թանկագինս... Մի դաւաճանէք նրան... Չէ որ դուք նրան... սիրում էք... Այդպէս չէ...

—Այո, սիրում եմ...

—Օ, իմ հրեշտակ, Միշան մի բոպէ հիացած և սրտասուռչ նայում էր նրա աչքերին: Օ, սրբան դուք սքանչելի էք... շարունակեց Միշան և... զրկեց նրա իրանը...

—Այն, սիրեցէք նրան... այդ հրաշալի մարդուն... նա տեղն ու տեղ ոսկի է ոսկի...

Տիկինը ցանկացաւ աղաթել նրա զրկից բայց չկարողացաւ. Միշան քանի գնալով, աւելի ամուր էր գրկում նրա իրանը... Տիկինը իրա տեղը անյարմար գգաց և գլուխը թեքեց Միշայի կրծքին:

—Նրա սիրտը—շարունակեց Միշան, նրա հոգին... որտեղ կըգտնէք մի այդպիսի անձ... սիրել նրան, զգալ նրա սրտի բարախումը... գնալ նրա հետ ձեռք-ձեռքի տըւած, տանջել և ուրախանալ միասին... դուք ինձ հասկանում էք, չէ:

Միշան սկսեց հեկեկալ և գլուխը թուլանալով, ընկաւ Մարիա Սիմեօնովնայի ուսին. քանի գնում, աւելի ուժեղանում էր նրա լացը և զրա հետ աւելի ուժեղ գրկում նրա իրանը:

Այժմ, աւելի քան երէք, անյարմար էր գահաւորակի վրայ նստելը:

Տիկինը ցանկանում էր ազատել նրա զրկից, և հանգստացնել նրան ու մխիթարել... նա անպատճառ ցանկանում էր շնոր-



ՅԵՂԵՆԱԿԱՆ
ՆՈՆՎՈՐՄՈՒՆԵՅ



—Ասացէք խնդրեմ, դուք ճշմարիտ մտադիր էք իմ ձեռքս խնդրել:
 —Ի հարկէ, ի հարկէ:
 —Ուրեմն էլ ինչի եք յետաձգում—հայրիկս տանն է, մայրս էլ լաւ է տրամադրուած:
 —Կարող ե՞ն նրանք, հէնց այսօր իսկ առձեռ զրամ տալ ինձ. դիտէ՞ք, ես շատ կարիք ունեմ... փողի և, միայն ձեզ սիրելուցն է, որ ձեզ և ձեր ծնողներին եմ դիմում,—համարից դուս եմ պցում...
 —Համեցէք, եկէք խօսեցէք հօրս հետ—եթէ դուք բարի նպատակով եք ասում—հայրս ձեզ անշուշտ փող կըտայ. ձեր պաշտօնը ի՞նչ է:
 —Ես... իսկապէս, ը՛ր... ես... ի՞նչպէս ասեմ, ես ամառանոցներում եմ ապրում. անհոգ, անկախ... մի մի անգամ կանանց ծառայում եմ: